ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

14 փետրվարի 2014թ. ք. Երևան

Միջազգային իրավունքի մրցույթ-դատախաղ

2014թ.-ի փետրվարի 15-ին և 16-ին կկայանա «2014թ. Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան բանավոր մրցափուլը: Փետրվարի 15-ին ժամը 10:00-ից մինչև ժամը 15:30-ը, և փետրվարի 16-ին ժամը 10:00-ից մինչև ժամը 13:30-ը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում կկայանան մրցույթի բանավոր նախնական և կիսաեզրափակիչ մրցափուլերը, իսկ փետրվարի 16-ին ժամը 15.00-ին ՀՀ վճռաբեկ դատարանում կկայանա մրցույթի հայաստանյան մրցափուլի եզրափակիչ փուլը:

Դատախաղ-մրցույթի այս տարվա թեման վերաբերում է ծովի նվաճմանը և պահպանմանը, քրեական իրավազորությանը և փրկության վերաբերյալ ծովային իրավունքին: Թիմերը, ներկայացնելով երկու երկրներ, փորձելու են միջազգային դատարանի առջև հիմնավորել՝ թե արդյո՞ք մարդու իրավունքների պաշտպանության և ծովի նվաճման և պահպանման ընթացքում առաջացած որոշակի գործողություններ հանդիսանում են միջազգային իրավունքի խախտում: Բանավոր մրցափուլում հաղթող թիմը 2014թ.-ի ապրիլի 6-12-ը Վաշինգթոնում կմասնակցի մրցույթի միջազգային փուլին:
«Ֆ.Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթն անցկացվում է 1959թ.-ից՝ աշխարհի շուրջ 90 երկրներում՝ Իրավաբան Ուսանողների Միջազգային Ասոցիացիայի (ILSA) կողմից: Ամեն տարի մրցույթին մասնակցում են աշխարհի շուրջ 600 իրավաբանական դպրոցների և բուհերի թիմեր: Հայաստանում մրցույթն անցկացվում է 9-րդ անգամ:
Մրցույթի գրավոր աշխատանքները և բանավոր մրցափուլերը գնահատելու համար՝ որպես մրցույթի դատավորներ, հրավիրվել են միջազգային իրավունքի մասնագետներ՝ ճանաչված իրավաբաններ, դատավորներ, փաստաբաններ:
Մրցույթին կհաջորդի հանդիսավոր մրցանակաբաշխությունը՝ թիմերի և ջեսափականների մասնակցությամբ: Այն տեղի կունենա ՀՀ Վճռաբեկ դատարանում՝ ժամը 16:30:
Մրցույթի կազմակերպիչներն են Հայաստանի իրավաբանական հիմնադրամը, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան և «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը: Մրցույթի աջակիցն է ՀՀ Դատական դեպարտամենտը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել մրցույթի ազգային կառավարիչ Սյուզաննա Սողոմոնյանին.
հեռ.՝ 540199; ֆաքս՝ 580299; հասցե՝ Նալբանդյան 7, բն. 2; վեբ կայք՝ www.jessup.ayla.am; էլ. փոստ jessup@ayla.am